ԳԼՈՒԽ Ի.

Պատերազմ Ասկաղոնի. Պարտութիւն Սալահատտինի: Քաջութիւնք նորին յԱսորիս: Աւերումն նոր բերդին առ Յորդանանու: Ղլիճ Ասլան: Լատին իշխան Քերէքայ. Հաշտութիւն:

ՊԱՏՄԻՉՔ Արաբացւոց ասեն թէ Սալահատտին դարձ արարեալ յԵգիպտոս, սկիզբն արար պարսպել եւ ամրացուցանել զԳահիրէ քաղաք եւ հաստատել 'ի նմա զդպրոցս եւ զայլ բարեգործական շինուածս: Իսկ Թագաւորն Երուսաղէմի Բաղտովին Դ. առ 'ի բառնալ զխռովութիւնս եւ զերկպառակութիւնս իշխանաց իւրոց, ելոյծ զդաշնն զոր հաստատեալ էր ընդ Սուլթանին, զի կարասցէ շրջել զմիտս նոցա 'ի վերայ արտաքին թշնամեաց: Իբրեւ լուաւ զայս Սալահատտին՝ անապարեալ ժողովեաց զբազմութիւն զօրաց իւրոց, եւ ահեղ բանակաւ դիմեաց 'ի կողմանս Պաղեստինոյ առնուլ զառաջս փռանգին: Այլ Թագաւորն Երուսաղէմի հայեցեալ 'ի տկարութիւն իւր եւ 'ի սակաւութիւն զօրաց իւրոց, չհամարձակէր իջանել յասպարէզ մարտի ընդդէմ թշնամւոյ իւրոյ, զոր ինքն գրգռեալ էր. խոյս տուեալ ամրացաւ 'ի բերդն Ասկաղոնի: Իսկ Սուլթանն արձակեաց զզօրս իւր ասպատակել զերկիրն շրջակայ, եւ ինքն թիկնապահ զօրօք կալաւ տեղի ինչ անքոյթ 'ի մէջ Ասկաղոնի եւ Ռէմլէի: Ասպատակ զօրքն հեռացան 'ի բուն բանակէն ժամս իբրեւ 5, եւ գործեցին զմեծամեծ չարիս զաւուրս երիս: Քրիստոնեայք որք դիտէին 'ի բերդէն Ասկաղոնի եւ տեսանէին զհեռանալ զօրացն, ժամ դիպող գտեալ ելին արտաքս, եւ երթային լուռ եւ անձայն 'ի խորս եւ 'ի փոսս, զի մի երեւեսցին, եւ մերձեցան յիջեւանս Սուլթանին իբրեւ նետընկէց մի, եւ նորա տեսեալ զնոսա յանկարծակի՝ չփոթեցաւ յոյժ. ձայն տայր զայրագին հեծելազնդին կոչել եւ ժողովել զզօրն, եւ ինքն անապարեալ մեկնեցաւ անտի գրաւել զայլ տեղի կարեւոր, սակայն պաշարեցաւ 'ի քրիստոնէից, եւ չգտեալ զայլ հնարս դարձաւ 'ի փախուստ. եւ 'ի տաղնապիս յայսմիկ քա-